ՆԱԽԱԳԻԾ-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

<<-->> ----------2021թ. № ---------- -Ա

ՈՐՈՇՈՒՄ
ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՇԱՐՈՒՐԻ ՓՈՂՈՑԻ 26Ա ՇԵՆՔԻ Հ.24/1 ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածով, Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 23-ի հ. 315-Ն որոշման հավելվածի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականություն համարվող Շարուրի փողոցի հ.26ա շենքի հ.24/1՝ 35,67քմ մակերեսով սեփականության իրավունքով և 18,27քմ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով բնակարանը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման պետական գրանցման 16.12.2020թ. հ.16122020-01-0195 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Վասիլ Գրիգորյանին, Գայանե Գրիգորյանին, Անգին Մանուկյանին և անչափահաս Հայկ Գրիգորյանին, ում անունից հանդես է գալիս մայրը՝ Գայանե Գրիգորյանը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ **Հ. ՍԱՐԳՍՅԱՆ**

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք – Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

<<ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՇԱՐՈՒՐԻ ՓՈՂՈՑԻ 26Ա ՇԵՆՔԻ Հ.24/1 ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Նախագծով առաջարկվում է Երևան համայնքի սեփականություն հանդիսացող Շենգավիթ վարչական շրջանի Շարուրի փողոցի հ.26ա շենքի հ.24/1՝ 35,67քմ մակերեսով սեփականության իրավունքով և 18,27քմ մակերեսով ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով բնակարանը անհատույց օտարել(նվիրել) Վասիլ Գրիգորյանին, Գայանե Գրիգորյանին, Անգին Մանուկյանին և անչափահաս Հայկ Գրիգորյանին, ում անունից հանդես է գալիս մայրը՝ Գայանե Գրիգորյանը:

Շարուրի փողոցի հ.26ա շենքի հ.24/1՝ 35,67քմ մակերեսով սեփականության իրավունքով և 18,27քմ մակերեսով ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով բնակարանը, համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 16.12.2020թ. հ.16122020-01-0195 վկայականի հանդիսանում է Երևան համայնքի սեփականությունը:

Շարուրի փողոցի հ. 26ա շենքը հանդիսացել է <<Էլեկտրոն>> ՓԲԸ գործարանի թիվ 2 մանկապարտեզը և կառուցվել է վերջինիս արհկոմի միջոցներով: Քանի որ նշված մանկապարտեզը դադարել է իր գործունեությունը 1998 թվականին <<Էլեկտրոն>> ՓԲԸ տնօրինության համաձայնությամբ մանկապարտեզի տարածքը հատկացվել է բնակիչներին որպես բնակարան, այդ թվում նաև Վասիլ Գրիգորյանին և իր ընտանիքին: Վասիլ Գրիգորյանի և իր ընտանիքի Շարուրի փողոցի հ. 26ա շենքի հ. 24 բնակարանի նկատմամբ բնակտարածքության իրավունքը հաստատվել է նաև Շենգավիթի առաջին ատյանի դատարանի 2001 թվականի վճռով, ինչի հիման վրա Շենգավիթի թաղապետի կողմից 21.11.2002 թվականին տրամադրվել է հ. 220 որոշումը: Վասիլ Գրիգորյանը, Գայանե Գրիգորյանը և Անգին Մանուկյանը Շարուրի փողոց հ. 26ա շենքի հ.24 բնակարան հասցեում բնակվում են 1998 թվականից, իսկ անչափահաս Հայկ Գրիգորյանը՝ 2011 թվականից /հիմք՝ Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի <<Գայանե>> համատիրության նախագահի կողմից 01.03.2021թ. տրված տեղեկանքը/: Շարուրի փողոցի հ. 26ա շենքի հ. 24/1 բնակարանը 1998 թվականից փաստացի օգտագործվում, տնօրինվում է վերջիններիս կողմից, հանդիսանում է Շարուրի փողոցի հ. 26ա շենքի հ. 24 բնակարանի անբաժան մասը, ունի ընդհանուր մեկ մուտք: Շարուրի փողոցի հ. 26ա շենքի հ. 24 բնակարանը Երևանի քաղաքապետի 08.02.2021 թվականի հ.221-Ա որոշմամբ անհատույց օտարվել է Վասիլ Գրիգորյանին, Գայանե Գրիգորյանին, Անգին Մանուկյանին և անչափահաս Հայկ Գրիգորյանին, ինչի հիման վրա վերջիններս ստացել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 26.02.2021թ. հ.26022021-01-0192 վկայականը: Քննարկվող բնակարանը փաստացի օգտագործվում է վերոնշյալ անձանց կողմից, սակայն իրավահաստատող փաստաթղթերի բացակայության պատճառով հնարավորություն չեն ունեցել այն սեփականաշնորհել: Ծրագրի 4-րդ կետով նախատեսված իրավական և /կամ/ փաստական հանգամանքների առկայության դեպքում Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարանները, բնակելի տները և բնակելի տարածքները կարող են սեփականության իրավունքով անհատույց փոխանցվել քաղաքացիներին Երևանի քաղաքապետի որոշմամբ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ դեպքում բացակայում են Երևան քաղաքի 2020 թվականի դեկտեմբերի 23-ի հ. 315-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 4-րդ կետի 1-ից 7-րդ ենթակետերով նախատեսված իրավական և /կամ փաստական հանգամանքները, ուստի վերոհիշյալ ընտանիքի անդամների սեփականության իրավունքը տարիներ շարունակ զբաղեցրած բնակարանի նկատմամբ ձևակերպելու համար անհրաժեշտություն է առաջացել ընդունելու համապատասխան որոշում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Հ.ՍԱՐԳՍՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

<<ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու <<Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին>> որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻՔԱՂԱՔԱՊԵՏԻՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

<<ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու <<Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին>> որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ